



ՍԻՈՆ ԱՐՔԵՊ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԾՆՈՐՀԱՆԻ ՄԵԾ ՀԱՅՐԱՊԵՏԸ

Հայ եկեղեցւոյ մեծամուն հայրապետներն ու սուրբերը լուսատու փարոսներու պէս միշտ լուսավորած են հայ ժողովուրդի միտքըն ու հոգին: Հայաստանայց եկեղեցին կենսունակ ու կենսատու հաստատություն մըն է, հավատքի ու լուսի վառարանը հայ ազգին, որուն ծոցին մեջ կապրին ու կենը շնչւին մեծ հոգիները մեր ազգին, ու կներշնչեն իրենց հոտը: Անկէ կընդունին հավատքի կայծը, աստվածային սիրո կրակը, և յուրացնելով զայն, իրենց հոգիեն խառնելով անոր հետ՝ զայն կիոխանցեն իրենց հաջորդներուն: Հիսուսի կենաց Ավետարանն ու հավատքի լուսը առաքյալներու ձեռքով բերվեցաւ Հայաստան, Լուսավորիչն ու իր արժանավոր զավակներն ու հաջորդները— Մեծն Ներսէս, ս. Սահակ Պարթև, ս. Մեսրոպ Մաշտոց, Հովհան Մանդակունին, Հովհաննէս Օձնեցի, Նարեկացի և Ծնորհալին, ու բոլոր հոգեւից առաջնորդներն ու հայրապետները հայ եկեղեցւոյ, եղան այդ անշեջ լուսին լուսարարները, հսկեցին անոր վրա, առին ճառագայթներ անկէ ու լուսավորեցին հայ ժողովուրդի սիրտն ու հոգին:

Ս. Ներսէս Ծնորհալին այդ լուսաշող դէմքերեն մին է, ու մեծագույններեն, ոչ միայն մաքրակենցաղ սուրբ մըն է ան, այլ նաև առաքելատիպ հայրապետ մը, հոգեշունչ աղոթագիր մը, աստվածատուր բանաստեղծ մը, շնորհալի երգահան մը, և անգուգական բարեկարգիչ մը:

ԻՐ ԿՅԱՆՔԸ ՔԱՆԻ ՄԸ ԲԱՌՈՎ.—Ս. Ծնորհալին ծնած է ԺԲ դարու արշալույսին, Կիլիկիո Ծովք դշայկին մեջ, որոյն է նույն

բերդի իշխան Ապիրատին, մոտիկ ազգականը Վկայասեր Գր. կաթողիկոսին, և Գր. Մագիստրոսին: Յոթը տարեկանին որբ կը մնա իր Գրիգոր եղբոր հետ, որ 12 տարեկան էր: Վկայասերը անոնց խնամակալ կարգած էր Անիի հարսեղ կաթողիկոսը, որ անոնց դաստիարակությունը կհամձնէ Ծովքի Կարմիր վանքի վանահայր Ստեփանոս Մանուկ առաջնորդին: (18 տարեկանին վարդապետ և երիտասարդ հասակին մեջ եպիսկոպոս ձեռնադրված ըլլալուն համար է որ Մանուկ անունը կկրէր Ստեփանոս եպիսկոպոս՝ ըլլալով իր ժամանակին մեծագույն դէմքերեն մին): Ներսէս Կարմիր վանքի մեջ Ստեփանոս վանահոր ձեռքին տակ ստացաւ խնամյալ կրոնական կրթություն, ու երիտասարդ տարիքին վարդապետ և եպիսկոպոս ձեռնադրվեցաւ իր Գրիգոր եղբոր ձեռքով, որ իրմէ հինգ տարիով մեծ ըլլալով՝ կաթողիկոս օծված էր՝ Գրիգոր Գ Պահլավունի անունով հայտնի:

Ներսէս եղաւ իր եղբոր աջ բազուկը, անոր երկար կաթողիկոսության շրջանին: Իր եղբոր մահէն վերջ կաթողիկոս ընտրվեցաւ ալեփառ հասակին մեջ, 1166-ին, ու միայն 7 տարի վարեց հայրապետական պաշտոնը, կնքելով իր արդյունալից կյանքը 73 տարեկանին:

ԹԵ ԻՆՆՆ՝ ԾՆՈՐՀԱՅԻ ԿԿՈՇՎԻ.—Կարմիր վանքի Ստեփանոս Մանուկ առաջնորդի աշակերտներեն Ծնորհալի տիտղոսը կկրեն նաև հարսեղ, Իգնատիոս և Սարգիս վարդապետները, որոնք Ներսէսի դասընկերներն էին: Բայց, Ներսէս, ամենէն ավելի

վալյեցալ անոնց մեջ հանճարով ու շնորհքով, ու **Ծնորհալի** անունով անմահացալ: Ստեփանոս Մանուկ ավելի զարկ տված էր ս. Գրոց մեկնության, իր աշակերտներեն Ն. Ծնորհալին գրած է Մատթեոսի Ավետարանին մեկնությունը, Բարսեղ Ծնորհալին՝ Մարկոսի Ավետարանին, Իգնատիոս Ծնորհալին մեկնած է Դուկասի Ավետարանը, և Սարգիս Ծնորհալին հեղինակն է Կաթողիկյաց 7 թուղթերու մեկնության գիրքին:

Կարմիր վանքի դպրոցի պատվանունը եղած կրօնի ըլլալ **Ծնորհալի** տիտղոսը, ինչպես Սյունյաց դպրոցինն էր **Քերթող** (բանաստեղծ) և Արագածոտնինը՝ **Իմաստասեր**, ինչ որ կհայտնե դպրոցի ուսման ուղղությունը:

Ն. Ծնորհալին կոչվի նաև Կալեցի, Հրոմկլայի կաթողիկոսարանին անունով:

Ծնորհալին առանձին տոն չունի մեր Տոնացուցին մեջ, այլ կտոնախմբվի ս. Թարգմանչաց վարդապետաց հետ, ինչպես նաև Նարեկացին, որ Ժ դարուն կապեր, պատճառը—որովհետև անոնք Աստվածաշունչի իմաստին ու խորհուրդին թարգմանիչները եղան, թեև ոչ անոր բառերուն ու տառին: Անոնք թափանցեցին Կենաց Մատյանի աստվածային պատգամներուն, ներշնչվեցան անոնցմով ու զայն մեկնեցին, թարգմանեցին հայ ժողովուրդին համար, Ծնորհալին եղալ Ավետարանի սիրո քարոզիչ մը ու մեծ առաքյալ մը:

* * *

Իբրև կաթողիկոս.—Ծնորհալին հայ եկեղեցվո մեծագույն հայրապետներեն մին եղալ, սակայն կարճ շրջան մը միայն հովվեց հայ ժողովուրդը, թեև ավելի գործեց և օգտակար եղալ իր վարդապետության ու եպիսկոպոսության շրջանին, երբ, երկար տարիներ իր կաթողիկոս եղբոր աջ բազուկը հանդիսացալ:

Քաղաքական խառնաշփոթ շրջանի մը մեջ պաշտոն վարեց, Էջմիածնեն հեռու, որ պարսիկներու իշխանության տակ կգտնվեր, Անին կործանված էր: Կիլիկիո լեռներուն ու քերդերուն մեջ հայ իշխանապետություններ հաստատված էին, և Ռուբինյանց թագավորությունը կգործարար: Քաղաքական իշխանության հովանիին տակ էր հոգևոր իշխանությունը: Խաչակիրները Եվրոպայեն կուգային ս. Երկիրն ու Փրկչի ի. գերեզմանը ազատագրելու մեծությամբ ու իսլամ բռնակալության լուծեն, հայ թագավորներն ու իշխանները ապագայի ազատության մեծ հուսերով ու երազներով արթնի, ամեն օժանդակություն կընձայեին խաչակիրներուն, անոնց հետ քաղաքական հարաբերություններ մշակելով, կաթողիկ վանքերն ու եկեղեցիներն

յը կբազմանային Կիլիկիո մեջ հայ ժողովուրդը որսալու համար:

Միևնույն ատեն, իր եղբոր, Գրիգոր Գ. Պահլավունիի հայրապետության շրջանին, հույները կհուզեին միության խնդիրը, հունաց Կիո Մանվել կայսրն ու Միքայել Պատրիարքը պատգամավորներ դրկած էին հայոց կաթողիկոսեն, որուն բանագնացն էր իր եղբայրը Ներսես: Ծնորհալիի սիրտը քրիստոնեական սիրով լեցուն էր, սակայն, տեսալ թե հունաց նպատակն էր հայ եկեղեցին ձուլել և հունացնել, հուսախար եղալ մեծահոգի Ծնորհալին, ու ախյան կանգնեցալ Հայց. եկեղեցվո ուղղափառ դավանության և անկախության:

Իբրև հայրապետ Լուսավորչի Աթոռին վրա բազմած ատեն գրեց իր անդրանիկ կոնդակը, ընդարձակ, խնամյալ հայերենով ու ներշնչումով. «**Քնդհանրական Թուղթ**»-ը, անգուցական գործ մը, որ դարերու ընթացքին իրմե հետո ուղեցուցը և օրինակը եղալ հայ եկեղեցվո հայրապետներու անդրանիկ կոնդակներուն:

Բանաստեղծ ու Երածիշտ Ծնորհալին.—Երկու տաղանդներ այնքան գեղեցիկ ներդաշնակությամբ միացած Ներսեսի վրա, պարզ և անսեթևեթ, հստակ և սիրուն կառուցվածքով իր հոգեշունչ երգերն ու շարականները զարդարած է մեղանույշ ու սրտագրալ եղանակներով երգահան Ծնորհալին, իր միտքին ու հոգիին մեջ բառն ու եղանակը միասին ծնունդ առած են, անբաժան լույս տեսած են սրբազան ներշնչումով:

Հայ մատենագրության արծաթի դարուն մեծագույն դեմքն է Ծնորհալին, լուսատու ջահը: Իր գեղեցիկ լեզուն արծաթի հնչականությունը ունի, որուն մեջ կնշմարվի տալիսին դասական լեզվի ոսկի բարբառը:

Իր գրական երկերու ցանկին վրա են նաև «Յիսուս Որդին», «Վիպասանություն», «Ողբ Եղեւթի», «Հաստով Խոստովանիմ», ու անթիվ երգեր ու շարականներ, աղոթքներ ու տաղեր, առակներ ու հանելուկներ: Ծնորհալին մեծապես ճոխացուց մեր Ծարակնոցն ու Ժամագիրքը, —Եթե Ծարակնի առաջին հեղինակներն եղան ս. Սահակ ու ս. Մեսրոպ, Մովսես Քերթողն ու Մ. Խորենացին, Ա. Ժիրակացին, Հովհան Մանգակունցին ու Հ. Իմաստասեր Օձնեցին, Կոմիտաս ու Պետրոս Գեւորգյան կաթողիկոսները, Գր. Մագիստրոսն ու Ն. Լամբրոնացին, Կարոյան ու Հովհ. Պլուզ վարդապետները, Ստեփանոս Սյունեցին ու Կիրակոս Երզնկացին, և ուրիշներ, սակայն, Ծնորհալին ամենքն ալ գերազանցեց թե որակով և թե քանակով, ու բազմաթիվ ընտիր, պարզ ու հոգեզմայլ երգերով ու շարականներով հարստացուց մեր Ծարակնոցն ու Աղոթագիրքը: Ավագ տոնե-

րու և Ավագ օրհնություններու, Ծաղկազարդի, Հոգեգալուստի ու Վարդավառի, Վարդանանց ու Ղևոնդանց շարականները, Արեւիկայի երգերն ու աղոթքներն ուսման, եկեղեցիի ու Խաղաղականի, Աղ ու Հացից և Ավագ շաբթոյ շարականներու մեծ մասը իր ոսկի գրչէն ու իր աստվածատուր հաճախներէ բխած են: Իր անմահութեան փառապատկը կկազմեն մասնավորապէս այն անպաճույճ ու հոգեհույզ երգերը, որոնք ծանոթ են ամեն հայ հավատացալի,—«Զարթոյք»-ը, «Առաւօտ լուսոյ»-ն, «Աշխարհ ամենայն»-ը, «Այսօր անճառ»-ը, «Արարչական»-ը, «Աստուած անեղ»-ը, «Նայեաց սիրով»-ը, և այլն: Ասոնք կկոչվին Անձինք, այբուբենական կարգով գրված, և 36 տուններէ բաղկացած են: Ինչպէս առաջին անգամ Կոմիտաս կաթողիկոս, է դարուն գրեց Հոփսիսիմյանց շարականը. «Անձինք Նուիրեալք» սկզբնավորութեամբ: Ընդհանրապէս ու շարականներէն շատերը իր անվան սկզբնատուններով կսկսին, կազմելով «Ներքէսի երգ», զոր օրհնակ Վարդանանց «Նորահրաշ»-ը:

Վսեմ տեսիլքի ու շնորհալի հոգիի մարգարիտներ են իր երգերը, և ո՛րքան պարզ ու հասկնալի—«Առաւօտ լուսոյ, Սրեգակն արդար, Առ իս լոյս ծագեա», կամ «Սէր անուն Յիսուս, Սիրով քով ճմլեա, Սիրտ իմ քարեղէն», և կամ «Լոյս, արարիչ լուսոյ, առաջին լոյս, բնակեալդ ի լոյս անմատոյց, Հայր երկնաւոր»: Իսկ «Հաւատով Խոստովանիմ»-ը համապարփակ աղոթք մըն է, օրվան 24 ժամերուն յորաքանչյորին տուն մը հատկացված, և որ 36 օտար լեզուներու թարգմանված է:

Ընդհանրապէս Բարեկարգիչ հայ եկեղեցւոյ.—Քրիստոսի եկեղեցին աշխարհի մեջ ապրող ու գործող կենսունակ հաստատութիւն մըն է, ժամանակի ընթացքին կաճի ու կգարգանա: Հայաստանյայց եկեղեցւոյ հոգեւից հայրապետներն ու մեծանուն առաջնորդները զայն բարեկարգել են միշտ, նոր լուսով զարդարել են զայն ու ճոխացուցել: Մեր եկեղեցւոյ առաջին մեծ բարեկարգիչն է ս. Գր. Լուսավորիչ, հիմնադիրը ս. Էջմիածնի Մայր Աթոռին, երկրորդն է Մեծն Ներսէս Պարթև, հայ սիրտի Լուսավորիչը, հիմնադիրը գթութեան հարկերու, վանքերու և դպրոցներու: Երրորդը ս. Սահակ և ս. Մես-

րոպ, անբաժանելի զուգը, հայ միտքի լուսավորիչները, հայ գիրքերու հնարիչները ու Աստվածաշունչի անմահ թարգմանիչները, մեր եկեղեցւոյ հայացման առաջին ուսմիւրանները, ապա կուգան Ն. Ընդհանրապէս, Հովհանն Ռոտմեցի, Գրիգոր ու Մովսէս Տաթեւացիները և ուրիշներ:

ԺԲ դարուն, տակաւին հայ եկեղեցւոյ ժամասացութեան մեծ մասը կբաղկանար ս. Գրոց երկար ընթերցումներէ, ու մասնավորաբար փոխասաց և ձայնավոր սաղմոսերգություններէ, Ընդհանրապէս հորինեց նոր երգեր ու շարականներ, պարզ և հստակ լեզվով, սակայն իմաստալից ու ներշնչալ, և մանավանդ հաճախորդ ու կշռոյթով. ներդաշնակ երգեր, ու տաղաչափալ շարականներ, եկեղեցին ավելի մատչելի ու սիրելի դարձուց ժողովուրդին, քանի որ երաժշտությունը առիթնու է ու խորհրդավոր, և սիրելի նույնիսկ ամենէն ուսմիկ դասակարգին: Նոր կանոններով և թողութեով բարեկարգեց հայ եկեղեցին, վանքերն ու թեմերը, զեղծումներու և անկարգություններու դէմ խիստ օրենքներ սահմանեց: Իր «Ընդհանրական թուղթ»-ով մասնավոր հրահանգներ և պատվերներ տվալ բոլոր դասակարգերուն՝ եկեղեցականներէն սկսյալ մինչև հասարակ գյուղացիները, յորաքանչյորին առաձին գլուխներ հատկացնելով՝ այսպէս—վանականներուն և առաջնորդներուն, եպիսկոպոսներուն և քահանաներուն, իշխաններուն և զինվորականներուն, պաշտոնյաներուն ու երկրագործներուն, կանանց դասին, ու վերջապէս համոյրէն հայ ժողովուրդին:

Ընդհանրապէս մեր եկեղեցիին տվալ իր հայկական նկարագիրը, ու ցեղային կնիքը, հիմնոված Հիսուսի սիրտ և լույսի Ավետարանին ու առաքելական հավատքին վրա:

Առանց Ընդհանրապէս հայ եկեղեցին պիտի աղքատանար իր հոգևոր ժառանգութենէն ու իմացական գանձերէն, իր հոգեշունչ աղոթքներէն ու մանավանդ հոգեզմայլ տաղերէն ու շարականներէն:

Հայաստանյայց եկեղեցւոյ մեծագույն ու լուսաւիալ սուրբերէն մին է ան: Իր Ընդհանրապէս հոգին անլուելի կերպով կխոսի հայ եկեղեցւոյ մեջ, ու հոգևոր սնունդ կշամբէ հայ ժողովուրդին:

